«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Նոր դպրոց

Աթաբեկ Խնկոյան

Առակներ

Էլեկտրոնային գիրք

Ա. Խնկոյան
Առակներ: Էլեկտրոնային գիրք: Ե.:Նոր դպրոց, 2013.-14 էջ

Բովանդակություն

1. Մկների ժողովը----------Թվային գիրք
2. Մկների ժողովը----------Աուդիոգիրք՝ անգլերեն լեզվով
3. Ճպուռն ու մրջյունը------ Թվային գիրք
4. Ճպուռն ու մրջյունը-------Մուլտֆիլմ՝ ռուսերեն լեզվով
5. Ճպուռն ու մրջյունը-------Ռադիոթատրոն
6. Ագռավն ու աղվեսը-------Աուդիոգիրք
7. Ագռավն ու աղվեսը-------Առակի շարունակություն

Մկների ժողովը

Սով էր, սով էր մկստան,
Կատվի ձեռքից լկստան
Գզիրն ընկավ դռնեդուռ,
Էլ չթողեց տուն - կտուր,

Ջահել, ահել գեղովի,
Ջոջերին ջոկ տեղովի
Կանչեց, բերեց ժողովի՝
Թե ինչ անեն, որ կատվից
Մի հնարքով ազատվեն:

Եկան գյուղի ջոջերը,
Երկար, բարակ պոչերը,
Մասնակցեցին խորհուրդին,
Մի մուկ խոսեց իր հերթին.

- Լսեք, մկներ, ցեղակից,
Չունեմ որդի, կողակից,
Ես մի անտեր ծերուկ եմ,
Բայց պատվավոր մի մուկ եմ.
Պակսեց ուժը իմ ոտի,
Պետք է մեռնեմ անոթի…

Սովն է չոքել դռանը,
Ախ մռռանը, մռռանը,
Վեր է ընկել մառանը,
Ինչքան ասես նազ անի,
Ստից սատկի, տազ անի,
Մուկ տեսնելիս վազ անի,
Գլխից բռնի, կախ անի,
Թաթովը տա, խաղ անի,
Ուտի, քեֆը չաղ անի,

Էսպես զուլում ու կրակ,
Դեռ աչքերն էլ ջուխտ ճրագ:
Բայց թե ազնիվ մեր ցեղը
Կորչելու չէ զուր տեղը,
Ցավն էլ ունի իր դեղը…

Այ, բերել եմ ես մի զանգ,
Ծափ, ծլնգոց,
Մեջը զնգոց.
Կատվի վզից մենք կախ տանք,
Որ ինչքան էլ օրորա,
Որ ինչքան էլ շորորա,
Ստից սատկի, տազ անի
Գալն իմանանք գազանի:



Է, զանգը ո՞վ կախ անի.
- Ալո դու:
- Ալո՞ն տանի:
- Բալո, դու:
- Բալո՞ն կախե:
- Չալո, դու:
Չալոն կաղ է

-Մստո , դո ՛ւ:
-Մստոն կարճ է:
-Փստո, դո՛ ւ:
-Էդ էլ խի՞ղճ է:
-Համբո , դո ՛ւ:
-Ես տկար եմ:



-Չամբո , դո՛ ւ:
-Ասենք տարա,
Բա որ կատուն գա ինձ վրա՞ :
-Բտոն , Խտոն թող մեկից
Բռնեն կատվի քամակից :
-Ի՞նչ է խոսում չոր գանգը,
Լավ է դու տար էդ գանգը,
Էլ ի՞նչ Բտո, ի՞նչ ֆստան,-
Ճստաց Բտոն ճստճստան:

-Լռի՛, հանդուգն
Կոտորվե՛ք դուք ,,
Վախկոտներիդ ես թաղեմ,
Ճա՞ռ ասեմ, թէ՞ զանգ կախեմ,-
Գոչեց ջոջը,
Քաշեց պոչը:

Ճպուռն ու մրջյունը

Թռի-վռի
Մի ճպուռ,
Ողջ ամառը
Շուռ ու մուռ,
Երգեց, ճռռաց.
Ճռճռաց:
Մին էլ, ըհը՜,
Ձմեռը,
Փռեց իրա
Թևերը.
Բացեց գորգը
Սպիտակ,
Դաշտերն առավ
Ձյունի տակ:
Անցան պայծառ օրերը,
Էլ ո՞ րն ասեմ,
Էլ ո՞ րը,
Երբ ամեն մի



Թփի տակ
Թե սեղան կար,
Թե օթյակ:
Եկան օրեր
Ցրտաշունչ,
Ճպուռն ընկավ
Լուռ ու մունջ.
Քաղցած փորին
Էլ ի՜նչ երգ,
Ցուրտը տարավ
Ոտ ու ձեռք:
Զընգր-զընգր
Դողալով,
Ծանր-ծանր
Սողալով
Նա մրջյունին
Ասում էր.
- Գլխիդ մատաղ,
Սանամե՛ր,
Մի ճա՛ր արա
Շունչ առնեմ,

Ցրտից, սովից
Չմեռնեմ:
Կերակրի՛,
Տաքացրու՛,
Մինչև գարուն
Ապրեցրու:

- Ի՞նչ խաբար է,
Սանիկս,
Զարմանում եմ,
Ջանիկս,
Չաշխատեցի՞ր
Ամառը,
Ասա՛, ինչ էր
Պատճառը:
- Էդպես բանի,
Սանամե՛ր,
Էլ ժամանակ
Ո՞վ ուներ.
Էն խոտերում
Բուրավետ
Երգում էինք
Մերոնց հետ...
- Ուրեմն դու՞ ...

- Այո՛, ես
Ողջ ամառը
Դեն ու դես
Երգում էի
Մշտապես:
- Երգո՞ւ մ էիր...
Շատ բարի,
Այժմ էլ բռնի
Վեր-վերի,
Քամին ծափ տա,
Դու պարի՛:

Աուդիոգիրք «Մկների ժողովը» ՝ անգլերեն լեզվով

http://nor.mskh.am/node/10950

Հեղինակ՝ Ստելլա Երիցյան և վեցերորդցիներ

«Ճպուռն ու մրջյունը» Մուլտֆիլմ՝ ռուսերեն լեզվով

http://nor.mskh.am/node/11153

Հեղինակ՝ Աննա Մկրտումյան և հինգերորդցիներ

«Ճպուռն ու մրջյունը»՝ ռադիոթատրոն

http://nor.mskh.am/node/11145

Հեղինակ՝ Նելլի Արզության և նախակրթարան

«Ագռավն ու աղվեսը»՝ աուդիոգիրք

http://nor.mskh.am/node/11036

Հեղինակ՝ Նունուֆար Սմբատյան և երրորդ դասարանցիներ

«Ագռավն ու աղվեսը» առակի շարունակություն

http://nor.mskh.am/node/11039

Հեղինակ՝ Նունուֆար Սմբատյան և երրորդ դասարանցիներ

Նկարները՝ Գայանե Գասպարյան և չորրորդ դասարանցիներ

Տերևանկարները՝ Աննա Ստեփանյան և չորրորդ դասարանցիներ

Համակարգող՝ Նոր դպրոցի ընթերցավար Երանուհի Սանթրոսյան